

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

11 նոյեմբերի 2004 թվականի N 1592-Ն

ՆԵՐՔԻՆ ԱՅՐՄԱՆ ՇԱՐԺԻԶԱՅԻՆ ՎԱՌԵԼԻՔՆԵՐԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ
ԿԱՆՈՆԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 1999 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-Ի N 799 ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ
ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Ստանդարտացման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածը, ինչպես նաև հաշվի առնելով ավտոմոբիլային բենզինի և դիզելային վառելիքների օգտագործման ծավալները, մարդու կյանքին ու առողջությանը, ֆիզիկական և իրավաբանական անձանց ու պետական գույքին, կենդանիների և բույսերի կյանքին ու առողջությանը, շրջակա միջավայրին վնաս պատճառելու ռիսկի աստիճանը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը **որոշում է**

1. Հաստատել ներքին այրման շարժիչային վառելիքների տեխնիկական կանոնակարգը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության կառավարության 1999 թվականի դեկտեմբերի 31-ի «Կապար պարունակող բենզինի օգտագործումը կարգավորելու մասին» N 799 որոշումը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվանից 8 ամիս հետո՝ բացառությամբ սույն որոշման 1-ին կետով հաստատված տեխնիկական կանոնակարգի 1-ին աղյուսակի 5-րդ կետի և 3-րդ աղյուսակի 3-րդ կետի, որոնք ուժի մեջ են մտնում սույն որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից 3 տարի հետո:

(3-րդ կետը փոփ. 16.06.05 N 894-Ն)

Հայաստանի Հանրապետության
վարչապետ

Ա. Մարգարյան

2004 թ. նոյեմբերի 23
Երևան

Տ Ե Խ Ն Ի Կ Ա Կ Ա Ն Կ Ա Ն Ո Ն Ա Կ Ա Ր Գ

ՆԵՐՔԻՆ ԱՅՐՄԱՆ ՇԱՐԺԻՉԱՅԻՆ ՎԱՌԵԼԻՔՆԵՐԻ

I. ԿԻՐԱՌՄԱՆ ՈԼՈՐՏԸ

1. Սույն ներքին այրման շարժիչային վառելիքի տեխնիկական կանոնակարգի (այսուհետ՝ տեխնիկական կանոնակարգ) գործողությունը արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկի ծածկագրերին համապատասխան տարածվում է ներքին այրման հետևյալ շարժիչային վառելիքների վրա՝

ա) ոչ էթիլացված ավտոմոբիլային բենզին (այսուհետ՝ ավտոմոբիլային բենզին)՝

նորմալ, ռեզուլյար 2710 12 410

պրեմիում 2710 12 450

սուպեր 2710 12 490

2710 19 420,

բ) դիզելային վառելիք 2710 19 460,

2710 19 480:

(1-ին կետը փոփ. 25.04.13 N 438-Ն)

2. Սույն տեխնիկական կանոնակարգով սահմանվում են 1-ին կետում նշված վառելիքների անվտանգությունը բնութագրող ցուցանիշները, դրանց պահման, փոխադրման, իրացման ու օգտագործման փուլերում անվտանգության ապահովման և շրջակա միջավայրի պահպանության վերաբերյալ պահանջները, ինչպես նաև համապատասխանության հավաստման ընթացակարգերը:

3. Սույն տեխնիկական կանոնակարգը չի տարածվում ավիացիոն բենզինի և ռեակտիվային շարժիչների վառելիքների վրա:

4. Ավտոմոբիլային բենզինը և դիզելային վառելիքը ենթակա են համապատասխանության պարտադիր հավաստման:

II. ՀԱՄԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

5. Սույն տեխնիկական կանոնակարգում կիրառվում են հետևյալ հասկացությունները՝

ա) *բենզին*՝ հեղուկ նավթային վառելիք, որն օգտագործվում է կայծային բռնկման միացային շարժիչներում.

բ) *բռնկման ջերմաստիճան*՝ փորձարկման պայմաններում այն նվազագույն ջերմաստիճանը, որի դեպքում նավթամթերքի գոլորշիները բոցից կարճատև բոցավառվում են.

գ) *դիզելային վառելիք*՝ վառելիքաօդային խառնուրդի սեղմումից բոցավառվող հեղուկ նավթային վառելիք, որն օգտագործվում է շարժիչներում.

դ) *կոքսելիություն*՝ ցուցանիշ, որը ցույց է տալիս նավթամթերքի այրման ժամանակ կոքսային նստվածք առաջացնելու հակվածությունը.

ե) *ճայթյունակայունություն*՝ ֆիզիկաքիմիական հատկություն, որը որոշում է առանց պայթյունի բենզինի այրման ունակությունը՝ կայծային վառման շարժիչներում.

զ) *ցետանային թիվ*՝ ցուցանիշ, որը ցույց է տալիս միացային շարժիչներում վառելիքաօդային

խառնուրդի սեղմումից բոցավառվող հեղուկ նավթային վառելիքի այրման ժամանակ ճնշման աճի արագությունը՝ արտահայտված էտալոնային սանդղակի միավորներով.

ե) *ցետանային ցուցիչ*՝ թիվ, որը հաշվարկված է ըստ արտադրանքի խտության և թորման բնութագրերի արտադրանքի մոտավոր ցետանային թիվը ներկայացնելու համար.

ը) *օկտանային թիվ*՝ ցուցանիշ, որը ցույց է տալիս բենզինի ճայթյունակայունությունը՝ արտահայտված էտալոնային սանդղակի միավորներով.

թ) *ֆրակցիոն կազմ*՝ նավթամթերքի կազմ, որը որոշում է թորման ժամանակ որոշակի ջերմաստիճանի սահմաններում շոգիացված ֆրակցիաների քանակական պարունակությունը, մնացորդը և կորուստները:

III. ՇՈՒԿԱ ՄՈՒՏՔ ԳՈՐԾԵԼՈՒ ԿԱՆՈՆՆԵՐԸ

6. Հայաստանի Հանրապետության տարածքում արգելվում է ավտոմոբիլային բենզինի և դիզելային վառելիքի իրացումն առանց համապատասխանության հավաստման:

7. Հայաստանի Հանրապետության տարածքում համապատասխանության պարտադիր հավաստման ենթակա և շրջանառության մեջ գտնվող ավտոմոբիլային բենզինն ու դիզելային վառելիքը պետք է ուղեկցվեն համապատասխանության նշանի մակնշմամբ կամ համապատասխանության սերտիֆիկատով:

IV. ՀԻՄՆԱԿԱՆ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

8. Ավտոմոբիլային բենզինի անվտանգությունը բնութագրող ցուցանիշներն ըստ մակնիշների ներկայացված են 1-ին աղյուսակում, իսկ գոլորշիացման դասերը՝ 2-րդ աղյուսակում.

Աղյուսակ 1

Ցուցանիշի անվանումը	Նորմը ըստ բենզինի մակնիշի			
	նորմալ	ռեգուլյար	պրեմիում	սուպեր
1	2	3	4	5
1. Ճայթյունակայունությունը. օկտանային թիվը որոշված հետազոտական մեթոդով, ոչ պակաս	80	91	95	97
օկտանային թիվը՝ որոշված շարժիչային մեթոդով, ոչ պակաս	76	81	85	87
2. Կապարի պարունակությունը, մգ/դմ ³ , ոչ ավելի. մինչև 2006 թվականի նոյեմբերի 1-ը	10		5	
2006 թվականի նոյեմբերի 1-ից	5		5	
3. Խտությունը 15°C ջերմաստիճանում, կգ/մ ³	700-750		720-775	
4. Ծծմբի պարունակությունը, մգ/կգ, ոչ ավելի. մինչև 2008 թվականի նոյեմբերի 1-ը				
2008 թվականի նոյեմբերի 1-ից մինչև 2010 թվականի հունվարի 1-ը	500		150	

2010 թվականի հունվարի 1-ից	500		50	
	500		10	
5. Ածխաջրածինների ծավալային մասը, %, ոչ ավելի արոմատիկ օլեֆիններ	-		35,0	
	-	21,0	18,0	18,0
6. Բենզոլի ծավալային մասը, %, ոչ ավելի	5,0		1,0	
7. Թթվածնի զանգվածային մասը, %, ոչ ավելի 2008 թվականի դեկտեմբերի 8-ից	-		2,7	
8. Օքսիդիչների ծավալային մասը, %, ոչ ավելի 2008 թվականի դեկտեմբերի 8-ից				
մեթանոլ	-		3,0	
էթանոլ	-		5,0	
իզոպրոպիլ սպիրտ	-		10,0	
իզոբուտիլ սպիրտ	-		10,0	
եռաբուտիլ սպիրտ	-		7,0	
էթերներ (C5 և ավելի)	-		15,0	
այլ օքսիդիչներ	-		10,0	

(աղյուսակը խմբ. 16.06.05 N 894-Ն, փոփ., լրաց. 19.10.06 N 1583-Ն)

Աղյուսակ 2

Ցուցանիշի անվանումը	Նորմը ըստ դասերի		
	A	C _i	F
1. Բենզինի հագեցած գոլորշիների ճնշումը, կՊա՝ ոչ պակաս ոչ ավելի	45,0 60,0	50,0 80,0	70,0 100,0
2. Ֆրակցիոն կազմը՝ գոլորշիացած բենզինի ծավալային մասը, %-ը ըստ ջերմաստիճանի՝ 70°C (E 70) 100°C (E 100) 150°C (E 150) ոչ պակաս եռման վերջը՝ °C, ոչ բարձր կոլբայում մնացորդի ծավալային մասը, %, ոչ ավելի	20,0-48,0	22,0-50,0 46,0-71,0 75,0 210 2	

(աղյուսակը փոփ. 16.06.05 N 894-Ն)

9. 2-րդ աղյուսակում ներկայացված տառային նշագրերով ավտոմոբիլային բենզինի գոլորշիացման դասերը բաժանվում են ըստ սեզոնների՝
A՝ ամառային դաս (տաք ժամանակահատված)՝ մայիսի 1-ից մինչև հոկտեմբերի 1-ը,
C_i՝ անցումային դաս՝ մարտի 1-ից մինչև մայիսի 1-ը և հոկտեմբերի 1-ից մինչև դեկտեմբերի 1-ը,
F՝ ձմեռային դաս՝ դեկտեմբերի 1-ից մինչև մարտի 1-ը:

(9-րդ կետը խմբ. 16.06.05 N 894-Ն)

10. Դիզելային վառելիքները բաժանվում են 2 տեսակի՝
ավտոմոբիլային դիզելային վառելիքներ,
այլ տեխնիկայի արագընթաց դիզելային և գազատուրբինային շարժիչային վառելիքներ
(այսուհետ՝ դիզելագազատուրբինային վառելիքներ):

Ավտոմոբիլային դիզելային վառելիքների անվտանգությունը բնութագրող ցուցանիշները՝ ըստ սեզոնի դասերի, ներկայացված են 3-րդ աղյուսակում, դիզելագազատուրբինային վառելիքներինը՝ 3 ա աղյուսակում:

Աղյուսակ 3. Ավտոմոբիլային դիզելային վառելիքների ցուցանիշները և նորմերը

Ցուցանիշի անվանումը	Նորմը՝ ըստ					
	ԱՄԱՌԱ- ՅԻՆ	ՉՄԵՌԱՅԻՆ				
		0 դասի	1-ին դասի	2-րդ դասի	3-րդ դասի	4-րդ դասի
1	2	3	4	5	6	7
1. Ցետանային թիվը, ոչ պակաս կամ ցետանային ցուցիչը, ոչ պակաս	51,0 46,0	49 46	49 46	48,0 46,0	47,0 43,0	47,0 43,0
2. Խտությունը 15°C ջերմաստիճանում, կգ/մ ³	820- 845	800- 845	800- 845	800- 840	800- 840	800- 840
3. Պոլիցիկլիկ արոմատիկ ածխաջրածինների զանգվածային մասը, %, ոչ ավելի	11					
4. Ծծմբի պարունակությունը, մգ/կգ, ոչ ավելի. մինչև 2008 թվականի նոյեմբերի 1-ը 2008 թվականի նոյեմբերի 1-ից մինչև 2010 թվականի հունվարի 1-ը 2010 թվականի հունվարի 1-ից	350 50 10					
5. Բռնկման ջերմաստիճանը, °C, ոչ ցածր	55					
6. Ածխածնի մնացորդը (կոքսելիությունը) 10 % նստվածքում, %, ոչ ավելի	0,30					
7. Մածուցիկությունը՝ 40°C ջերմաստիճանում, մմ ² /վ	2,0-4,5	1,5-4,0	1,5-4,0	1,5-4,0	1,4-4,0	1,2-4,0
8. Պղտորման ջերմաստիճանը, °C, ոչ բարձր	5	մինուս 10	մինուս 16	մինուս 22	մինուս 28	մինուս 34
9. Ֆրակցիոն կազմը.	360					
95 % թորման ջերմաստիճանը	-	10				
(թորման վերջը), °C, ոչ բարձր	65	-				
180°C ջերմաստիճանում, %, ծավալային մասը, ոչ բարձր	-	95				
250°C ջերմաստիճանում, %, ծավալային մասը, ոչ բարձր	85	-				

340°C ջերմաստիճանում, %, ծավալային մասը, ոչ ցածր		
350°C ջերմաստիճանում, %, ծավալային մասը, ոչ ցածր		

(աղյուսակը խմբ. 16.06.05 N 894-Ն, 19.10.06 N 1583-Ն)

Աղյուսակ 3ա. Դիզելագազատուրբինային վառելիքների ցուցանիշները և նորմերը

Ցուցանիշի անվանումը	Նորմը՝ ըստ	
	ԱՄԱՌԱՅԻՆ	ՁՄԵՌԱՅԻՆ
1. Ցետանային թիվը, ոչ պակաս կամ	45	
2. Խտությունը 20°C ջերմաստիճանում, կգ/մ ³ , ոչ բարձր	860	840
3. Ծծմբաջրածնի պարունակությունը	Բացակայում է	
4. Ծծմբի զանգվածային մասը, մգ/կգ, ոչ ավելի	500	
5. Բռնկման ջերմաստիճանը, որոշված փակ հալքանոթում, °C, ոչ ցածր		
ընդհանուր նշանակություն դիզելների համար,	40	35
ջերմաքաշ և նավային դիզելների ու գազատուրբինների համար	61	40
6. Ածխածնի մնացորդը (կոքսելիությունը) 10% նստվածքում, %, ոչ ավելի	0,20	0,30
7. Կինեմատիկական մածուցիկությունը՝ 20°C դեպքում, մմ ² /վ	3,0-6,0	1,8-5,0
8. Պղտորման ջերմաստիճանը, °C, ոչ բարձր	մինուս 5	մինուս 25
9. Ֆրակցիոն կազմը՝		
50% թորման ջերմաստիճանը, °C, ոչ բարձր	285	280
95% թորման ջերմաստիճանը (թորման վերջը), °C, ոչ բարձր	370	340

(աղյուսակը խմբ. 16.06.05 N 894-Ն, փոփ. 19.10.06 N 1583-Ն)

(10-րդ կետը խմբ. 16.06.05 N 894-Ն)

11. Սույն տեխնիկական կանոնակարգի 1, 2, 3 և 3ա աղյուսակներում սահմանված ցուցանիշների փորձարկման մեթոդների ստանդարտների նշագրերը և անվանումները ներկայացված են VIII բաժնում:

(11-րդ կետը փոփ. 16.06.05 N 894-Ն)

12. (կետն ուժը կորցրել է 19.10.06 N 1583-Ն)

ՎԱՌԵԼԻՔՆԵՐԻ ՄԱԿՆՇՄԱՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

13. Վառելիքների յուրաքանչյուր փոխադրական տարայի վրա պետք է մակնշված լինեն հետևյալ տվյալները՝

- ա) վառելիքի անվանումը, մակնիշը,
- բ) արտադրող, մատակարարող կազմակերպության անվանումը և ապրանքային նշանը (դրա առկայության դեպքում), գտնվելու վայրը,
- գ) համաքաշը և զտաքաշը,
- դ) թողարկման թվականը,
- ե) «Պահպանել տաքացումից» մակագրությունը,
- զ) ստանդարտի նշագիրը:

14. Փոխադրական տարայի վրա պետք է մակնշված լինեն նաև փոխադրական և «Պահպանել տաքացումից» վարվելակարգային նշաններն ու բեռների փոխադրման վտանգավորությունը բնութագրող «3-րդ դաս», «3.1-ին ենթադաս», վտանգավորության նշանը «3», դասակարգման ծածկագիրը՝ «3111» «OOH-1203» սույն տեխնիկական կանոնակարգի VIII բաժնում ներկայացված ստանդարտների պահանջներին համապատասխան:

15. Փոխադրական տարայի վրայի մակնշվածքները պետք է օժտված լինեն ջրով և նավթամթերքով լրացումից ամրությունը չկորցնելու հատկությամբ:

16. Ավտոմոբիլային բենզինի իրացման կետերի բաշխիչ պոմպասյունների վրա պետք է մակնշված լինեն բենզինի մակնիշը, օկտանային թիվը՝ որոշված հետազոտական մեթոդով:

Դիզելային վառելիքների բաշխիչ պոմպասյունների վրա պետք է լինեն մակնշված դիզելային վառելիքի տեսակը (ավտոմոբիլային դիզելային վառելիք կամ դիզելագազատուրբինային վառելիք) և «ԱՄԱՌԱՅԻՆ» կամ «ՁՄԵՌԱՅԻՆ-0», «ՁՄԵՌԱՅԻՆ-1», «ՁՄԵՌԱՅԻՆ-2», «ՁՄԵՌԱՅԻՆ-3», «ՁՄԵՌԱՅԻՆ-4» (ավտոմոբիլային դիզելային վառելիքի համար) կամ «ՁՄԵՌԱՅԻՆ» (դիզելագազատուրբինային վառելիքի համար) մակնշվածքը:

Եթե ավտոմոբիլային բենզինում (1-ին աղյուսակի 4-րդ կետ) և ավտոմոբիլային դիզելային վառելիքում (3-րդ աղյուսակի 4-րդ կետ) ծծմբի պարունակությունը չի գերազանցում 10 մգ/կգ-ից, ապա ավտոմոբիլային բենզինի և ավտոմոբիլային դիզելային վառելիքի պոմպասյունների վրա կարող են լրացուցիչ նշվել «Ծծումբ չի պարունակում» մակնշվածքը

(16-րդ կետը խմբ. 16.06.05 N 894-Ն, 19.10.06 N 1583-Ն)

17. Վառելիքների պահեստարանների, ավտոլցակայանների և լցման կետերի վրա պետք է մակնշված լինեն 13-րդ կետով սահմանված տվյալները՝ բացառությամբ «գ» ենթակետի:

18. Վառելիքների արտադրական շինություններում, պահեստարաններում, իրացման կետերում պետք է փակցված լինեն վառելիքների հետ վարվելու ժամանակ անվտանգության պահանջների պահպանման վերաբերյալ համապատասխան հրահանգներ, որոնք պետք է բովանդակեն որոշակի վառելիքների ստանդարտներով սահմանված համապատասխան ցուցումներ:

ՎԱՌԵԼԻՔՆԵՐԻ ՓԱԹԵԹԱՎՈՐՄԱՆԸ, ՓՈԽԱԴՐՄԱՆԸ ԵՎ ՊԱՀՄԱՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՁՆԵՐԸ

19. Ավտոմոբիլային բենզինի պահման համար պետք է օգտագործվեն հետևյալ տարաները՝
ա) նավթի, նավթամթերքի և հեղուկ գազի ստորգետնյա պահեստարաններ՝ ըստ ՄՆԻՊ 2.11.04-85 «Նավթի, նավթամթերքի և հեղուկ գազի ստորգետնյա պահեստարաններ».

բ) հորիզոնական, ցածր ճնշման մետաղական անշարժ և շարժական պահոցներ.

գ) հորիզոնական և գլանային, բարձր ճնշման մետաղական անշարժ և շարժական պահոցներ.

դ) ուղղաձիգ՝ կամրջակով, սահուն կափարիչով, գազային եզրակապով մետաղական անշարժ և շարժական պահոցներ:

20. Դիզելային վառելիքի պահման համար պետք է օգտագործվեն հետևյալ տարաները՝

ա) 19-րդ կետի «ա» և «բ» ենթակետերով սահմանված պահեստարանները և պահոցները.

բ) ուղղաձիգ՝ առանց կամրջակի, գազային եզրակապով և այլ մետաղական անշարժ ու շարժական պահոցները:

21. Վառելիքների պահեստարանները պետք է ունենան սահուն կափարիչներ կամ պոնտոններ, կամ գազային եզրակապեր՝ կախված պահեստարանների շահագործման պայմաններից:

22. Տարաները վառելիքներով լցնելուց առաջ անհրաժեշտ է դրանք զննել: Տարաները կեղտոտ

լինելու դեպքում պետք է լվանալ նավթային լուծիչի հետ խառնած տաք ջրով կամ շոգեմաքրել՝ լրիվ հեռացնելով վառելիքների ու մեխանիկական խառնուկների նստվածքները, և չորացնել:

Վառելիքների մետաղական պահոցները, բացառությամբ վառելիքի երկարատև պահման համար նախատեսվածների, ենթակա են մաքրման՝ առնվազն 2 տարվա պարբերականությամբ:

23. Վառելիքների պահման համար նախատեսվող մետաղական պահոցների նորմատիվ և տեխնիկական փաստաթղթերում պետք է նախատեսել դրանց ներսի մակերեսների հակաքայքայիչ անհրաժեշտ պատվածքի վերաբերյալ պահանջը:

Հակաքայքայիչ պատվածքը պետք է դիմացկուն լինի վառելիքների ապրանքատարային ջրերի, գոլորշու (կամ տաք ջրի) ազդեցության նկատմամբ:

Վառելիքները պահոցներում պահելու ընթացքում չի թույլատրվում ապրանքատարային ջրերի նվազագույն մակարդակի բարձրացում, որի համար պետք է կիրառվեն ջրաքաշման համար նախատեսված սարքեր:

24. Վառելիքները փոխադրվում են հեղուկաթափման և լցման համապիտանի սարքով համալրված վազոն-ցիստեռններով և ավտոցիստեռններով:

Վառելիքները փոխադրվում են նաև վառելիքներ ինքնալցավորող փոխադրական միջոցներով և անշարժ ու շարժական խողովակաշարով:

Տարաների լցման մակարդակը պետք է լինի 95 տոկոսից ոչ ավելի ծավալով, եթե նման պահանջ սահմանված չէ կոնկրետ վառելիքի ստանդարտներով:

25. Վառելիքների սպառողական տարայի համար օգտագործում են մետաղական կանիստրներ: Վառելիքներով լցված տարաները փակում են հերմետիկ խցանափակման միջոցներով:

26. Վառելիքներով լցված տարաները պետք է փոխադրվեն երկաթուղային և ավտոմոբիլային տրանսպորտով՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ բեռների փոխադրման համար սահմանված կանոններին համապատասխան:

27. Վառելիքներով լցված վազոն-ցիստեռնների և ավտոցիստեռնների ապրանքառուղեկից փաստաթղթերը պետք է բովանդակեն սույն տեխնիկական կանոնակարգի 13-րդ կետով սահմանված տվյալները և սույն տեխնիկական կանոնակարգի 8-րդ և 10-րդ կետերով սահմանված՝ լցված վառելիքի ցուցանիշները:

28. Վառելիքների պահման ժամկետը սահմանվում է արտադրողի կողմից և նշվում է կոնկրետ վառելիքի ստանդարտներում և ապրանքառուղեկից փաստաթղթերում:

ՎԱՌԵԼԻՔՆԵՐԻ ԱՐՏԱԴՐՄԱՆ, ԻՐԱՑՄԱՆ ԵՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԺԱՄԱՆԱԿ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՀԱՆՁՆԵՐԸ

29. Վառելիքները քիչ վտանգավոր արտադրանք են և օրգանիզմի վրա ազդեցության աստիճանին համապատասխան՝ ըստ սույն տեխնիկական կանոնակարգի VIII բաժնում ներկայացված համապատասխան ստանդարտի՝ դասվում են վտանգավորության 4-րդ դասին:

30. Արտադրական շինությունների աշխատանքային գոտու օդում ավտոմոբիլային բենզինի ածխաջրածինների գոլորշիների սահմանային թույլատրելի խտությունը չպետք է գերազանցի 100 մգ/մ³ նորմը, իսկ դիզելային վառելիքինը՝ 300 մգ/մ³:

Մթնոլորտային օդում վառելիքների ածխաջրածինների գոլորշիների սահմանային թույլատրելի խտությունը չպետք է գերազանցի 5 մգ/մ³ նորմը:

31. Վառելիքները շուտ բռնկվող հեղուկներ են, որոնց հրդեհապայթյունավտանգավորության բնութագրերը և նորմերը ներկայացված են 4-րդ աղյուսակում:

Ցուցանիշի անվանումը	Նորմը	
	ավտոմոբիլային բենզինի	դիզելային վառելիքի
Ինքնաբռնկման ջերմաստիճանը, °C	255-370	300-310
Բռնկման ջերմաստիճանի սահմանները, °C ստորին վերին	մինուս 27-ից մինչև մինուս 39	62-ից մինչև 69
	մինուս 8-ից մինչև մինուս 27	105-ից մինչև 119
Բոցի տարածման խտության սահմաններն ըստ ծավալի, % ստորին վերին	1	2-3
	6	

V. ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՎԱՍՏՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐԸ

32. Սույն տեխնիկական կանոնակարգի պահանջներին վառելիքների համապատասխանությունը հավաստելու համար արտադրողը, մատակարարը կամ նրա լիազոր ներկայացուցիչը պետք է ներկայացնի Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի օգոստոսի 12-ի «Արտադրանքի կամ ծառայությունների համապատասխանության պարտադիր հավաստման համար կիրառվող սխեմաները և դրանց նույնականացման նշագրերը սահմանելու մասին» N 1170-Ն որոշմամբ սահմանված սերտիֆիկացման 2ս-6ս սխեմաներից որևէ մեկով հավաստված համապատասխանության սերտիֆիկատ:

Արտադրողը, մատակարարը կամ նրա լիազոր ներկայացուցիչը վառելիքների համապատասխան փոխադրական տարաների վրա և ապրանքադրոշմից փաստաթղթերում կարող է նշել Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի սեպտեմբերի 9-ի «Համապատասխանության նշանի պատկերը, դրան ներկայացվող տեխնիկական պահանջները և կիրառման կարգը հաստատելու մասին» N 1281-Ն որոշմամբ հաստատված ձևի համապատասխանության նշան՝ կիրառելով համապատասխանությունը հավաստող սերտիֆիկացման մարմնի նույնականացման նշագիրը:

(32-րդ կետը խմբ. 16.06.05 N 894-Ն)

33. Սերտիֆիկացման մարմինը փորձարկումներ կատարելու նպատակով նավթամթերքի նմուշառումն իրականացնում է արտադրողի, մատակարարի կամ նրա լիազոր ներկայացուցչի մասնակցությամբ՝ նավթամթերքի տվյալ խմբաքանակը բնորոշող նվազագույն բավարար քանակով՝ սույն տեխնիկական կանոնակարգի VIII բաժնում ներկայացված ցանկում ընդգրկված նմուշառման ստանդարտով սահմանված պահանջներին համապատասխան:

34. Հավատարմագրված փորձարկման լաբորատորիան փորձարկումները պետք է կատարի սույն տեխնիկական կանոնակարգի VIII բաժնում ներկայացված փորձարկման մեթոդների ստանդարտներին համապատասխան:

35. Սերտիֆիկացման մարմինը հայտատուին համապատասխանության սերտիֆիկատ

հանձնելու ժամանակ նրա հետ կնքում է համապատասխանության սերտիֆիկատի օգտագործման մասին պայմանագիր, եթե սերտիֆիկացման գործողություններն իրականացվել են 2ս, 3ս, 4ս կամ 5ս համապատասխանության հավաստման սխեմայով:

36. Սերտիֆիկացման մարմինը համապատասխանության սերտիֆիկատի գործողության ժամկետի ընտրությունը պետք է կատարի ըստ իրականացված համապատասխանության սխեմայի՝

2ս սխեմայի դեպքում՝ 12 ամիս,

3ս սխեմայի դեպքում՝ 24 ամիս,

4ս սխեմայի դեպքում՝ 36 ամիս,

5ս սխեմայի դեպքում՝ 36 ամիս, 6ս սխեմայի դեպքում սահմանվում է՝

ավտոմոբիլային բենզինի համար՝ մեկ տարվանից ոչ ավելի, բայց 3 ամսից ոչ պակաս,

դիզելային վառելիքի համար՝ 3 տարվանից ոչ ավելի, բայց 6 ամսից ոչ պակաս:

(36-րդ կետը փոփ. 16.06.05 N 894-Ն)

37. «Համապատասխանության գնահատման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան սերտիֆիկացված վառելիքների համապատասխանության հսկողությունն իրականացվում է համապատասխանության սերտիֆիկատի գործողության ամբողջ ժամկետի ընթացքում, առնվազն տարեկան մեկ անգամ՝ սույն տեխնիկական կանոնակարգի 35-րդ կետում նշված պայմանագրով սահմանված ժամկետներում:

38. Սերտիֆիկացման մարմինն իրավունք ունի համապատասխանության հսկողության արդյունքների հիման վրա «Համապատասխանության գնահատման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան իր կողմից տրված համապատասխանության սերտիֆիկատի գործողության ժամկետը պահպանելու կամ համապատասխանության սերտիֆիկատի գործողությունը կասեցնելու կամ դադարեցնելու: Համապատասխանության սերտիֆիկատի գործողության կասեցման և դադարեցման պայմանները սահմանված են Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի օգոստոսի 12-ի N 1170-Ն որոշմամբ:

Համապատասխանության սերտիֆիկատի գործողությունը կասեցնելու կամ դադարեցնելու դեպքում սերտիֆիկացման մարմինը դրա մասին տեղեկացնում է համապատասխանության սերտիֆիկատը տնօրինողին և գրավոր ծանուցում ստուգումներ իրականացնող իրավասու մարմնին:

VI. ՉԱՓՈՒՄՆԵՐԻ ՄԻԱՄՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ

39. Վառելիքների չափումների միասնականությունը պետք է ապահովվի «Չափումների միասնականության ապահովման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:

VII. ՊԵՏԱԿԱՆ ՎԵՐԱՀՄԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ

40. Սույն տեխնիկական կանոնակարգի պահանջներին վառելիքների համապատասխանության պետական վերահսկողությունը պետք է իրականացվի «Համապատասխանության գնահատման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:

VIII. ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳՈՎ ՄԱՀՄԱՆՎԱԾ ՊԱՀԱՆՋՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՒՄ ԵՎ ԱՊԱՀՈՎՈՂ ՍՏԱՆԴԱՐՏՆԵՐԻ ՑԱՆԿԸ

Ստանդարտի նշագիրը	Պահանջներ և փորձարկման մեթոդներ սահմանող ստանդարտի անվանումը
1	2
ՀՍՏ ԵՆ 237	Հեղուկ նավթամթերք. Կարբյուրատորային վառելիք. Կապարի ցածր կոնցենտրացիաների որոշում ատոմաաբսորբման սպեկտրաչափական մեթոդով
ԳՕՍՍ 12.1.007	Աշխատանքի անվտանգության ստանդարտների համակարգ. Վնասակար նյութեր. Դասակարգում և անվտանգության ընդհանուր պահանջներ
ԳՕՍՍ 33 (ԻՍՕ 3104)	Նավթամթերք՝ թափանցիկ և ոչ թափանցիկ. Կինեմատիկական մածուցիկության և դինամիկական մածուցիկության որոշման մեթոդ
ԳՕՍՍ 511	Վառելիք շարժիչների համար. Օկտանային թվի որոշման շարժիչային մեթոդ
(տողը հանվել է 16.06.05 N 894-Ն)	
ԳՕՍՍ 1756 (ԻՍՕ 3007)	Նավթամթերք. Հագեցած գոլորշիների ճնշման որոշում
ԳՕՍՍ 2177 (ԻՍՕ 3405)	Նավթամթերք. Ֆրակցիոն կազմի որոշման մեթոդ
ԳՕՍՍ 2477	Նավթ և նավթամթերք. Ջրի պարունակության որոշման մեթոդ
ԳՕՍՍ 2517	Նավթ և նավթամթերք. Նմուշառման մեթոդներ
ԳՕՍՍ 3122	Վառելիք դիզելային. Ցետանային թվի որոշման մեթոդ
ԳՕՍՍ 3900	Նավթ և նավթամթերք. Խտության որոշման մեթոդներ
ԳՕՍՍ 5066 (ԻՍՕ 3013)	Վառելիք շարժիչային. Պղտորման ջերմաստիճանի, բյուրեղացման սկզբի և բյուրեղացման որոշման մեթոդներ
(տողը հանվել է 16.06.05 N 894-Ն)	
ԳՕՍՍ 6356	Նավթամթերք. Փակ հալքանոթում բոցավառման ջերմաստիճանի որոշման մեթոդ
ԳՕՍՍ 8226	Վառելիք շարժիչների համար. Օկտանային թվի որոշման հետազոտական մեթոդ
ԳՕՍՍ 14192	Մակնշում բեռների
ԳՕՍՍ 19121	Նավթամթերք. Ծծմբի պարունակության որոշում լամպի մեջ վառելու մեթոդով
ԳՕՍՍ 19433	Բեռներ վտանգավոր. Դասակարգում և մակնշում
ԳՕՍՍ 19932 (ԻՍՕ 6615)	Նավթամթերք. Կոքսելիության որոշում Կոնրադսոնի մեթոդով
ԳՕՍՍ 28828	Բենզիններ. Կապարի որոշման մեթոդ
ԳՕՍՍ Ռ 51069	Նավթ և նավթամթերք. Խտության, հարաբերական խտության և խտությունը աստիճաններով API արեումետրով որոշման մեթոդ
ԳՕՍՍ Ռ 51930	Բենզին ավտոմոբիլային և ավիացիոն. Բենզոլի որոշում ինֆրակարմիր-սպեկտրադիտարկման մեթոդով
ԳՕՍՍ Ռ 51941	Բենզիններ. Արոմատիկ ածխաջրածինների որոշման գազաքրոմատագրաֆիկական մեթոդ
ՀՍՏ ԻՍՕ 4264	Նավթամթերք. Միջին նավթաթորվածքներում ցետանային ցուցիչի որոշում չորս

	փոփոխականով հավասարման միջոցով
ՀՍ ԵՆ 12916	Նավթամթերք. Միջին թորվածքներում արոմատիկ ածխաջրածինների տեսակների որոշում. Բարձրարդյունավետ հեղուկային քրոմատագրման մեթոդ՝ բեկման ցուցչի որոշմամբ
ԳՕՍ 17323	Վառելիքների շարժիչների համար. Մերկապատանային և ծծմբաջրածնային ծծմբի որոշան պոտենցիոմետրիկ տիտրման մեթոդ
ԳՕՍ 29040	Բենզիններ. Բենզոլի և արոմատիկ ածխաջրածինների գումարային պարունակության որոշման մեթոդ
ՀՍ ԵՆ 13132	Հեղուկ նավթամթերք. Ոչ էթիլացված բենզին. Թթվածին պարունակող օրգանական միացությունների և օրգանապես կապված թթվածնի ընդհանուր պարունակության որոշման գազային քրոմատագրման մեթոդ աշտարակների փոխանակմամբ
ՀՍ ԻՍՕ 20847	Նավթամթերք. Ավտոմոբիլային վառելիքների մեջ ծծմբի պարունակության որոշում. Էներգիական դիսպերսիայով ռենտգենյան ֆլուորեսցենտային սպեկտրաչափում
ՀՍ ԻՍՕ 20884	Նավթամթերք. Ավտոմոբիլային վառելիքների մեջ ծծմբի պարունակության որոշում. Ալիքային դիսպերսիայով ռենտգենյան ֆլուորեսցենտային սպեկտրաչափում

(աղյուսակը փոփ, լրաց 16.06.05 N 894- Ն, խմբ, լրաց 19.10.06 N 1583- Ն)

(հավելվածը փոփ, խմբ, լրաց 16.06.05 N 894- Ն, 19.10.06 N 1583- Ն, փոփ. 25.04.13 N 438- Ն)

**Հայաստանի Հանրապետության
կառավարության աշխատակազմի
ղեկավար-նախարար**

Մ. Թովուզյան